ԳՐ. ՋԱՆՋԵԱՆԻ 25 ԱՄԵԱԿ

1899 թ. նոյեմբերի 20 ին, Մոսկուայում տօնուեցաւ և մի ուրիշ յոբելեան—դա պ. Գրիգոր Զանշեանի քսանհինգամեակն էր։

Պ. Զանշեանը թէև հայերէն լեզուով գրեթէ ոչինչ աշխատութիւն չէ տուել մեզ, սակայն ռուս հասարակութեան մէջ նա յայտնի է որպէս մի ընտիր և եռանդոտ հրապարակախօս. նորա «Эпохы великихъ реформъ» 7-դ թէ 8 դ տպագրութեան է արժանացել կարճ ժամանակուայ ընթացքում։ Բայց մանաւանդ նա յայտնի է իւր «Братская помощь» նշանաւոր ժողովածուի հրատարակութեամբ, որ երկու-երեք տարուայ ընթացքում արդէն երրորդ անգամն է տպագրւում և որի արդիւնքով բաւական թուով հայ որբանոցներ են բացուած Տաճկա-Հայաստանում։

Խմբագրութիւնս պարտք համարեց շնորհաւորել ազնիւ գործչի յոբելեանը հետևեալ հեռագրով.

Մոսկուա, իրաւաբան Մամիկոնեանին.

Ողջունում ենք ազնիւ գիտնական Գրիգոր Զանշեանի քսանհինգամեայ փառաւոր ծառայութիւնը գիտութեան։

---

† Ս. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ

Ընդամենը մի երկու վեցամսեայ հանդէսներ ունէինք հայերէն լեզուով և նոցանից մէկն էլ դադարեց այս օրերս նորա հրատարակչի մահուան պատճառով։

«Արաքս» գեղարուեստական հանդիսի հրատարակիչ Սիմէոն Գուլամիրեանցը կարճատև հիւանդութիւնից յետոյ, իւր հայրենի Երևան քաղաքում, կնքեց իւր երկրաւորը և հայ ընթերցող ժողովուրդը զրկուեցաւ իւր